

ՄԵԿՆՈՒՄՆ

Եւ գատկի չորեքշաբթին սկսան զնալ ուխտաւորքն. ոմանք ծովովք եւ այլք ցամաքով : Եւ անդ էր տեսանել զլաց եւ զհառաչ, յորժամ հրաժարէին ի սուրբ եւ աստուածակոխ տեղեացն : Նախ ի սուրբ Բեթղէհէմ զնացաքապա ի սուրբ Փրկիչ եւ ի Ջառներն, ուր մեռեալք կային, ուստի հոտ անուշ բուրէր. եւ ասին թէ ով Ջառներն թաղվի, նորա մեղքն չյիշի, զի Քրիստոսի արեան զնով զնած է. ասպա Գետսամանի եւ Աղբերն Սելովամ, եւ Գերեզման Աստուածամօրն, Հրեշտակապետ. եւ Սուրբ Յարութիւնն՝ տալով վերջին ողջունն : Վա՛յ ինձ որ զրկեցայ այնպիսի վայելուչ եւ փրկաւէտ վայրաց. զի այնպէս կսկծելի թուէր մեր զնալն, որպէս ի զրկաց մարց :

Նորա մտեալ կէմին՝ Ռամլայ ելին : Եւ ես եղկելիս ծախեցի զձիս եւ զնեցի լաւ էչ մի եւ ցամքով զնացի ընդ ուխտաւորս հետ տէր Ղուկաս պարոնտէրին, որ երթայր նուիրակ ի Լէհ. եւ ինձ հրամայեաց մի մեկնիլ ի նմանէ. որ եւ ես յանձն առի երթալ ընդ նմա մինչ ի Լով՝ սպասաւորելով նմա յամենայն զործս եւ ի բանս :

Էր ընդ մեզ եւ հոգեւոր տէրն Յովհաննէս կաթողիկոս : Վասն որոյ պարոնտէր Առաջնորդն ուղարկէր զմեզ մինչ ի ՁԷՇՄԷԼՈՒՆ, որ է կէս խօնախ : Իսկ մեք երթալով երթայաք եւ լայաք. եւ յետս դարձեալ հայէաք ի